

Կոկոս

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Երեխաները շրջան են կազմել պարզելու համար, թե ով պիտի աչքերը փակի, որ մյուսները թաքնվեն: Միայն թե նրանք հետևյալ կերպ են հաշվում:

Սկզբում բոլորը երկու ձեռքերն իրար կպցրած կոկոս են խորհրդանշում: Հաշվողը ում վրա կանգնում է, վերջինիս ձեռքերն առանձնացնում է և երկու ձեռքերը պահում է առանձին բռունցքներ արած: Դա նշանակում է, որ կոկոսը բաժանվեց երկու կեսերի: Հաջորդ հաշվարկը պետք է սկսի նրա մի ձառքից, ապա անցնի մյուս ձեռքին և նոր հաջորդ խաղացողին:

Եթե հաշվարկը հասնում է որևէ մեկի առանձին բռունցք արած ձեռքին, վերջինս պետք է ձեռքը պարզի: Դա նշանակում է կոկոսի հյուսթը դատարկվեց: Հաջորդ հաշվարկը պետք է սկսի նրա մյուս ձեռքից կամ հաջորդ խաղացողից:

Եթե հաշվարկը հասնում է որևէ մեկի բաց ձեռքին, նա ձեռքը պետք է պահի ետևում, այսինքն այդ ձեռքը դուրս է գալիս խաղից: Հաջորդ հաշվարկը սկսվում է այդ խաղացողի մյուս ձեռքից կամ հաջորդ խաղացողից:

Եթե որևէ խաղացողի երկու ձեռքերը դուրս են գալիս խաղից, այդ խաղացողը դուրս է գալիս խաղից և շրջանը նեղանում է:

Տրված է երեխաների N քանակը: Համարենք, որ նրանք համարակալված են 1-ից N թվերով: Տրված է նաև հաշվելու K թիվը: Պետք է գրել ծրագիր, որը պարզում է, թե որ համարի խաղացողը կման վերջում, եթե հաշվարկը սկսվի 1 համարի խաղացողից:

Մուտքային տվյալներ

Տրված են K ($1 \leq K \leq 100$) և N ($2 \leq N \leq 100$) թվերը:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ վերջում մնացած խաղացողի համարը:

Օրինակ

Մուտք	Ելք
1 2	2
10 10	7